

ՑՈՒՑԱԿ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ՁԵՌԱԳԻՐ
ՂՈՒՐԱՆՆԵՐԻ

CATALOGUE
OF THE QUR'AN
MANUSCRIPTS OF
THE MATENADARAN



فهرس

مخطوطات القرآن الكريم في الماتيناداران

Օրագիրը իրականացվել է «Իսլամական ձեռագրերի ընկերակցության»,
«Տեսաուրուս Իսլամիկուս» հիմնադրամի և Մատենադարանի
հովանավորությամբ

The project was sponsored by the Islamic Manuscript Association, Thesaurus
Islamicus Foundation and the Matenadaran

هذا العمل برعاية منظمة هيئة المخطوطات الإسلامية ومؤسسة جمعية المكنز الإسلامي والماتيناداران

COMPOSED BY:

INDIAN, KENNETH VENERA MAKARYAN, MOVSES
KHECHO, MIHRAN MINASIAN

OF

EDITED BY:

THE QUR'AN MANUSCRIPTS OF THE MATENADARAN



«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

MATENADARAN
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

دار المخطوطات القديمة – الماتيناداران

ՑՈՒՑԱԿ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐ ԴՈՒՐԱՆՆԵՐԻ

CATALOGUE

OF

THE QUR'AN MANUSCRIPTS OF THE MATENADARAN

فهرس

مخطوطات القرآن الكريم في الماتيناداران

«ՆԱԻՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2016

"NAIRI" PUBLISHING HOUSE

YEREVAN-2016

دار نايري للنشر

یريفان-۲۰۱۶ م

016
2-99
h2

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝ ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
ՔՆԱՐԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ
ՎԵՆԵՐԱ ՄԱԿԱՐՅԱՆ
ՄՈՎՍԵՍ ԽԵՉՈ
ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

ԽՍԲԱԳԻՐՆԵՐ՝ ՎԱՀԱՆ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ
ԶԱՐՈՒՀԻ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ
ՄՈՎՍԵՍ ԽԵՉՈ

COMPOSED BY:

VAHAN TER-GHEVONDIAN, KNARIK SAHAKYAN, VENERA MAKARYAN, MOVSES KHECHO, MIHRAN MINASIAN

EDITED BY:

VAHAN TER-GHEVONDIAN, ZARUHI SOGHOMONYAN, MOVSES KHECHO

1795

المحررون:

فاهان دير غيفونديان
زاروهي صوغمونيان
موسيس خيجو

المفهرسون:

فاهان دير غيفونديان
كناريك ساهاكيان
فينيرا ماكاريان
موسيس خيجو
مهران ميناسيان



ՀԴԴ09
ԳՄԴ76.11
8991

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի Գիտական խորհրդի որոշմամբ

Published by the decision of the Matenadaran Scientific Council

طبع بموافقة قسم البحوث العلمية في دار المخطوطات القديمة - الماتيناداران

Ցուցակ Մատենադարանի ձեռագիր Ղուրանների

8 991 Ներկա հատորը ընդգրկում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ձեռագիր Ղուրանների ընդարձակ նկարագրությունը: Մա առաջին հրատարակությունն է, որով ներկայացվում են Մատենադարանի արաբատառ ֆոնդում պահվող ձեռագրերը: Գիրքը նախատեսված է ձեռագրագետների, արևելագետ-խալամագետների և պատմաբանների համար:

Catalogue of the Qur'an Manuscripts of the Matenadaran

The current volume includes a vast description of manuscript Qur'ans deposited in the Mashtots Institute of Ancient Manuscripts. This is the first publication to introduce the manuscripts kept in the Arabic fund of the Matenadaran. The book is foreseen for codicologists, orientalis, islamologists and historians.

فهرس مخطوطات القرآن الكريم في الماتيناداران

هذا الكتاب عبارة عن فهرسة شاملة لمخطوطات القرآن الكريم المحفوظة في دار المخطوطات القديمة - الماتيناداران. يشمل الفهرس نسخ من مجموعة مخطوطات الحرف العربي وهي الطبعة الأولى. نأمل أن يعود هذا الكتاب بالفائدة على المهتمين بعلم الكتب المخطوطة والدراسات الإسلامية والمستشرقين والمؤرخين.

Գրքի կազմին՝ ձեռ. 1623 (2բ, 3ա)

Cover illustrations MS1623 (2b, 3a)

صورتي الغلاف من المخطوط رقم 1623 (2ب، 3أ)

ՀԴԴ09
ԳՄԴ76.11

ISBN 978-5-550-01783-8

© Մատենադարան, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, 2016:

© «Նաիրի», հրատ. ՓԲԸ, 2016:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածական խոսք	7
Ձեռագրերի նկարագրություն	17
Համառոտ բառարան	215
Գրականության ցանկ	216
Անվանացանկ	217
Պատկերաշար	225

CONTENTS

Preface	7
Manuscript description	17
Bibliography	216
Index	217
Illustrations	225

فهرس

7	المقدمة
17	وصف المخطوطات
216	المراجع
217	الفهرس
225	الصور

Երևանի Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրական հարուստ հավաքածուի մեջ հայերեն մատյաններից հետո թվով երկրորդը արաբատառ (արաբերեն, պարսկերեն, օսմաներեն և այլն) ձեռագրերն են: Դրանց ընդհանուր թիվը հասնում է 2723-ի (չհաշված 611 պատառիկները)՝ գրանցված մեկ ընդհանուր ցուցակի մեջ: Սա փոքր թիվ չէ ոչ միայն առանձին հավաքածուի, այլև մի ամբողջական ձեռագրատան համար: Դրանց մեջ գերակշռում են արաբերեն ձեռագրերը, որոնք ունեն կրոնական, ուսումնական, գիտական բնույթ:

Անցյալ դարի 60-90-ական թթ. Մատենադարանում, հայագետների կողքին աշխատել են մի խումբ հմուտ արևելագետներ՝ վաստակաշատ գիտնական Հակոբ Փափազյանի գլխավորությամբ, որոնք որոշակի ավանդույթներ են ստեղծել հատկապես պարսկերեն վավերագրերի հետազոտման ու գիտական հրատարակության բնագավառում: Այնուամենայնիվ, արևելյան ձեռագրերի ուսումնասիրությունը և լիարժեք նկարագրությունը երկար ժամանակ դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից:

Վերջին տարիներին Մատենադարանի տնօրենությունը նախաձեռնեց նոր թափ հաղորդել այդ աշխատանքներին և դրանք առավել կազմակերպված ու համակարգված դարձնելու նպատակով 2012 թվականին հիմնեց մի նոր ստորաբաժանում՝ Արաբատառ ձեռագրերի նկարագրման և ուսումնասիրման բաժինը, որի գլխավոր խնդիրներն են ձեռագրացուցակների կազմումն ու առավել արժեքավոր գրական հուշարձանների ուսումնասիրումն ու գիտական հրատարակությունները:

2013 թվականին համագործակցություն սկսվեց Երևանյան Մատենադարանի և Իսլամական ձեռագրերի ընկերակցության (Քեմբրիջ, Մեծ Բրիտանիա) միջև, որի արդյունքում սկսվեցին աշխատանքները Մատենադարանի հավաքածուի մեջ պահվող Ղուրանների կատալոգի կազմման ուղղությամբ: Մինչ այդ Մատենադարանում կազմակերպվեց արաբատառ ձեռագրերի նկարագրման դասընթաց, որը վարեց Լեյդենի համալսարանի պրոֆեսոր Յան Յուստ Վիտկամբ: Նա իր խորհուրդներով մեծապես օգնեց «Ցուցակ Մատենադարանի Ձեռագիր Ղուրանների» հատորի կազմման աշխատանքներին:

Ղուրանների ներկա ձեռագրացուցակը առաջին փորձն է լիարժեք նկարագրությամբ ներկայացնելու Մատենադարանի արաբատառ ձեռագրերի մի մասը: Այն իր մեջ պարունակում է 120 ձեռագրեր և պատառիկներ Իսլամի Սուրբ Գրքի՝ Ղուրանի տեքստերով: Դրանք գրեթե բոլորն էլ գրվել են Բրանում կամ Օսմանյան կայսրությունում: Ձեռագրերի ճնշող մեծամասնությունը ժամանակային առումով ընդգրկում է 17-րդ, 18-րդ և 19-րդ դարերը: Կազմողները ձեռագրի գրության ժամանակն ու տեղը ճշտելիս աշխատել են խուսափել ենթադրություններից և հիմնվել են հիշատակարանների տվյալների կամ ակնհայտ ցուցիչների վրա: Ձեռագրերի նկարագրություններն իրականացրել են Մատենադարանի հինգ աշխատակիցներ, որոնք հետևել են միևնույն սկզբունքներին և նույն հարցաշարին: Այնուամենայնիվ հնարավոր են որոշ ոչ էական տարբերություններ:

Վերոհիշյալ ձեռագրերից (որոնցից ամբողջական գրքի տեսք ունեն 102-ը, իսկ 18-ը պատահական են) հիշատակարաններով օժտված է մեկ հինգերորդը, որը ներկայացնում է հետևյալ ժամանակային պատկերը:

Իր հնությամբ բացառիկ է թիվ 1621 ձեռագիրը, որն իրենից ներկայացնում է Ղուրանի 5-րդ Մասը (*Ձուզը*): Այն ունի 12-րդ դարի նվիրաբերման հիշատակարան, որից պարզ է դառնում, որ ձեռագիրը Հիջրայի 507 թվականին (1113/1114, սելջուկյան դարաշրջան) նվիրաբերվել է Դամասկոսի մզկիթներից մեկին: Բնականաբար ընդօրինակությունը կատարվել է նախքան այդ, մեծ հավանականությամբ նույնպես Սիրիայում: Հիշյալ ձեռագիրը Մատենադարանին է նվիրել Վարուժան Մալաթյանը (Դամասկոս, Սիրիա):

Հավաքածուի մեջ հնությամբ երկրորդ ձեռագիրը Սեֆյան դարաշրջանից է (ձեռ. 1004) գրի առնված Հիջրայի 1039 (1630) թ. Շիրազ քաղաքում, իսկ մյուսները հիմնականում ստեղծվել են 17-19-րդ դարերում, ընդ որում մեծ տեղ է զբաղեցնում Ղաջարական դարաշրջանը: Գրչի հիշատակարանով ձեռագրերը ընդօրինակված են Շիրազ, Մեշհեդ, Թավրիզ, Թեհրան (Մաադաբադ), Հալեպ և Վան քաղաքներում: Կան նաև մի քանիսը, որոնք թեև չունեն հիշատակարան, բայց ակնհայտորեն գրված են Իրանում:

Ձեռագրերը գրված են ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան թղթի վրա, քիչ չեն նաև ժամանակակից թղթի վրա գրվածները: Բացառություն է կազմում ենթադրաբար 8-9-րդ դարերով թվագրվող մի պատահիկ, որը գրված է մագաղաթի վրա *քուֆի* գրատեսակով: Մատենադարանի Ղուրանների ճնշող մեծամասնությունը գրված են *նասխ* գրատեսակով, թեև կան նաև բացառություններ. օրինակ *մադրիբի* (ձեռ. 631, 647, 49 (պատ.), 1928) *նասթալիկ* (ձեռ. 1902), *ռայհան* (ձեռ. 613, պատ. 70) *ռիկաս* (63 (պատ.)), *սուլուս* (ձեռ. 531, 2044) գրատեսակներով գրվածները: Երբեմն *սուրան*երի անվանումները գրված են այլ գրատեսակով: Օրինակ, ողջ տեքստը գրված է *նասխով*, իսկ սուրաների անվանումները՝ *քուֆիով* (ձեռ. 647) կամ *ռիկասայով* (ձեռ. 988), կամ *սուլուսով* (ձեռ. 1766):

Հետաքրքրական են լեզվական դիտարկումները: Մի խումբ հիշատակարաններ ամբողջությամբ (300, 303, 459-39-րդ հատոր, 462, 644) կամ մասամբ (279) գրված են պարսկերենով, կան նաև ամբողջական (1902) կամ մասնակի (2095) պարսկերեն միջտողային թարգմանություններ: Որոշ ձեռագրերում առկա են նաև օսմաներեն գրություններ (990, 1798 պատ. 24):

102 Ղուրաններից շուրջ մեկուկես տասնյակը կազմվել են որպես մասերի (հատորների) բաժանված, բայց ամբողջական Ղուրան (այդպիսիք են օրինակ ձեռ. 459-ը (42 հատոր) և 261-ը (16 հատոր, պակասավոր)): Կան նաև ձեռագրեր (մեկ հատորով), որոնց մեջ մեկտեղել են Ղուրանի որոշ ընտրովի *սուրան*երը: Երկու դեպքում էլ դրանք ծառայել են ուսումնական նպատակների համար և կամ էլ պատրաստվել են նվիրաբերման համար:

Կա նաև հակառակ երևույթը, երբ մի կազմի մեջ ամփոփված են երկու և ավելի (մինչև անգամ 9) ձեռագրեր, որոնց թե թուղթը և թե ընդօրինակող անձը ակնհայտորեն տարբեր են (օրինակ՝ երկու (360, 406), երեք (1022), հինգ (613), ութ (441), ինը (815) ձեռագիր մի կազմի մեջ):

Մատենադարանի Ղուրանների հավաքածուի մի շարք ձեռագրեր աչքի են ընկնում ոչ միայն վայելչագրությամբ, այլև մանրանկարչական տաղանդով ու կազմի ձևավորման հմտություններով: Մասնավորապես գեղեցիկ կազմերով աչքի են ընկնում թիվ 355, 647, 1004, 1537, 1621, 1766, 1798, 1884, 1926, 1928 ձեռագրերը, իսկ ճակատագրորդերի ու լուսանցագրերի ճոխության ու նրբության տեսակետից հիշատակության արժանի են 546, 647, 721, 787, 884, 963, 1004, 1537, 1623, 1798, 1926, 1928 ձեռագրերը, թիվ 3 և 48 պատահիկները:

Արաբերեն բառերը լատինական տառերով գրելու համար հետևել ենք Գերմանական արևելյան ընկերության տառադարձությանը (Umschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft), իսկ նույն բառերի հայերեն տառադարձության համար հետևել ենք 1981 թ.-ից Արամ Տեր-Ղևոնդյանի կողմից կիրառության մեջ դրված համակարգին:

Ինչպես Մատենադարանի ողջ ձեռագրական ֆոնդը, այնպես էլ Ղուրանների հավաքածուն հիմնվել են երկու կարևոր հավաքածուների՝ Սուրբ Էջմիածնի Մատենադարանի և Մոսկվայի Արևելյան լեզուների ինստիտուտի (նախկին Լազարյան ձեմարան) ձեռագրերի մեկտեղմամբ (1920-ական թվականներ): Սակայն անցած ժամանակահատվածում անհատ բարերարների կատարած նվիրատվությունները թվով նույնիսկ գերազանցել են սկզբնական հավաքածուն:

Սկզբնապես Մատենադարանին անցած Ղուրանների մեջ հետաքրքիր «կենսագրություն» ունեն 10-ը (255, 256, 261, 267, 274, 275, 280, 294, 300, 322), որոնք 1915-1916 թվականներին Լիմ անապատի վանահայր Հովհաննես վարդապետ Հյուսյանի և այլ նվիրյալների ջանքերով շուրջ 1600 հայերեն ձեռագրերի հետ մեկտեղ տարբեր վայրերից (Մուշ, Աղթամար, Լիմ և այլն) փրկվել են ոչնչացումից և տեղափոխվել Սուրբ Էջմիածին, իսկ հետո էլ այնտեղից՝ Երևան:

Հատուկ երախտագիտությամբ պետք է հիշել Մատենադարանի մեծ բարերարներից մեկին՝ Հարություն Հազարյանին (Նյու Յորք, ԱՄՆ), որի Մատենադարանին նվիրած շուրջ 400 ձեռագրերից 20-ը (969, 986, 990, 996, 1005, 1150, 719, 721, 787, 795, 800, 815, 856, 860, 884, 888, 942, 947, 963, 1004) Ղուրաններ են և կազմում են մեր ներկայացրած հավաքածուի մի պատկառելի մասը: Հավաքածուն ամբողջացրել են մի ամբողջ շարք նվիրյալ անձինք տարբեր ժամանակներում աշխարհի տարբեր երկրներից՝ Վարուժան Մալաթյանը¹ (Դամասկոս, Սիրիա) - 1621, 1622, 1623, Միհրան Միևասյանը (Հալեպ, Սիրիա) - 2288, 2363, 2574, Սարգիս Մկրտչի Մելքոնյանը (Թեհրան, Իրան) - 639, 647, Հակոբ Գրիգոր Ջերջիրյանը (Փարիզ, Ֆրանսիա) - 1022, 1023, Հովիկ Էղգարյանը (Լոնդոն, Մեծ Բրիտանիա) - 2095, Վահե Ջարինը (Կոպենհագեն, Դանիա) - 1098, Ղրղյան ընտանիքը (Բոստոն, ԱՄՆ) - 2716 և ուրիշներ:

Մատենադարանի Ղուրանների նկարագրությունը իրականացրել են Վահան Տեր-Ղևոնդյանը (246, 248, 255, 256, 261, 267, 273, 274, 275, 276, 279, 280, 294, 300, 303, 322, 331, 340, 356, 2095 ձեռագրերը և 1, 3, 15 պատահիկները), Քնարիկ Մահալյանը (355, 359, 406, 616, 969, 986, 990, 996, 1005, 1022, 1098, 1150, 1622, 1902, 2000, 2005, 2140

¹ Վարուժան Մալաթյանն ապրել է Դամասկոսում, սակայն Մատենադարանին նվիրաբերած ձեռագրերը նրա Բեյրութի հավաքածուից են, ուստի արձանագրվել են որպես նվիրատվություն Բեյրութից:

ձեռագրերը և 66, 70, 72, 73, 74 պատառիկները), Վեներա Մակարյանը (360, 430, 439, 440, 441, 459, 479, 481, 531, 546, 560, 613, 617, 631, 1203, 2716 ձեռագրերը և 16, 19, 24, 34 պատառիկները), Մովսես Խեչոն (639, 642, 644, 647, 719, 721, 787, 795, 800, 815, 856, 860, 884, 888, 904, 942, 947, 963, 988, 1004, 1179, 1766, 1908 ձեռագրերը և 39, 43, 48, 49 պատառիկները) և Միհրան Մինասյանը (1023, 1114, 1537, 1552, 1621, 1623, 1798, 1842, 1884, 1912, 1915, 1926, 1928, 1945, 2021, 2025, 2039, 2044, 2144, 2164, 2198, 2199, 2201, 2288, 2363, 2574 ձեռագրերը և 63, 64 պատառիկները): Պարսկերեն և օսմաներեն գրությունների վերծանության և թարգմանության հարցում իրենց աջակցությունն են բերել Մատենադարանի աշխատակից իրանագետ ու օսմանագետ մեր գործընկերները:

Ձեռագրագուցակը կազմողների խումբը իր երախտագիտությունն է հայտնում Բալամական ձեռագրերի ընկերակցության ղեկավար խորհրդին և «Տեսուրուս Իսլամիկուս» հիմնադրամին աշխատանքների ֆինանսավորման, ինչպես նաև Մատենադարանին սույն գրքի հրատարակության համար:

Աշխատանքների ողջ ընթացքում մենք մշտապես զգացել ենք Մատենադարանի տնօրենության և աշխատակիցների, մասնավորապես Ձեռագրատան, Ընթերցասրահի և Թվայնացման բաժնի մեր գործընկերների աջակցությունը:

Հուսով ենք, որ Մատենադարանի Արաբատառ ձեռագրական ֆոնդի նկարագրման առաջին փորձը լավ ընդունելություն կգտնի Հայաստանում և նրա սահմաններից դուրս:

Վահան Տեր-Ղևոնդյան

Մատենադարանի գիտնական քարտուղար
Արաբատառ ձեռագրերի նկարագրման և
նուսումնասիրման բաժնի վարիչ

PREFACE

Among the rich manuscript collection of the Mesrop Mashtots Matenadaran (Yerevan), Arabic script (Arabic, Persian, Ottoman Turkish etc.) codices are the second in number after Armenian manuscripts. Their general number reaches 2723 (with 611 fragments not included). This is a considerable amount even for an entire depository, let alone a sole collection. The majority of those manuscripts are in Arabic and are mostly of religious, educational and scientific nature.

From the 1960s to the 1990s a group of skillful orientalists worked in the Matenadaran side by side with armenologists under the leadership of the distinguished scholar Hakob Papazian. They established certain traditions for investigating and publishing archive documents in Persian. Nonetheless, the study and complete description of the Arabic script codices remained beyond the scope of scholars for a long period of time.

In 2012 the Matenadaran administration started a new initiative in an effort to reinvigorate those activities, make them more organized and coordinated. For that very purpose the Arabic Script Manuscript Department was created. The main goal of the department is to make manuscript catalogues, study and publish the most valuable ones.

In 2013 a fruitful cooperation started between the Yerevan Matenadaran and the Islamic Manuscript Association (Cambridge, UK). As an outcome, works aimed at preparing the catalogue of Qur'āns from the Matenadaran collection was initiated. Prior to that, a course about Arabic script manuscript description was organized in the Matenadaran led by Emeritus Professor Jan Just Witkam from Leiden University. He greatly supported the preparation of the "Catalogue of the Qur'ān manuscripts in the Matenadaran".

The present catalogue of the Qur'āns is the first attempt to having a complete description of a part of Arabic script codices of the Matenadaran. It contains 120 manuscripts and fragments of the Qur'ānic texts – the Holy Book of Islam. Almost all of these texts were written in Iran or the Ottoman Empire. The overwhelming majority of the manuscripts date back to the 17th, 18th and 19th centuries. Codicologists tried to rely on the data of the colophons or on some obvious signs when determining the time and place of copying the manuscript. The descriptions were done by five researchers of the Matenadaran following the same principles and answering to the same inventory. However, the possibility of some minute differences cannot be excluded.

From the abovementioned manuscripts (102 are entire books and 18 are fragments) only 20 per cent have colophons which reveal data summarized below.

The oldest manuscript and most exceptional among them is the MS 1621, which is the 5th part (guz') of the Qur'ān. It has a donation colophon of the 12th century, which reveals that in 507 of *Hijra* (1113/1114, Seldjuk period) it was donated to one of the Damascus mosques. Naturally, the copy had been done before that, most probably also in Syria. This manuscript was donated to the Matenadaran by Varoujan Salatian (Damascus, Syria).

The second oldest manuscript among the collection is from the Sefevid period (MS 1004) which was copied in 1039 of *Hijra* (1630) in Shiraz, while the rest is of 17-19th centuries, with an important part from the Kadjar period. Manuscripts which have colophons of the copyist are

from Shiraz, Meshhed, Tabriz, Tehran (Saadabad), Aleppo and Van. There are the ones that are missing the colophons, and yet they hold obvious signs of being written in Iran.

The manuscripts are written on both Oriental and Western paper, quite an important quantity is written on Modern paper. The only exception is a fragment probably from the 8-9th cc. written on a parchment with kūfī type of scripture. The outright majority of the Qur'āns are written with nashī type of scripture, though there are some exceptions as – mağribī (MSs 631, 647, 1928, Fr. 49), nast'alīq (MS 1902), rayḥān (MS 613, Fr. 70), riqā' (Fr. 63), ṭuluṭ (MSs 531, 2044). In some cases the sūra headings are written with different scripture. For example, the whole text is written in nashī, while the sūra headings are written with kūfī (MS 647), or riqā' (MS 988) or ṭuluṭ (MS 1766).

Of interest are linguistic observations that are to be mentioned. A group of colophons completely (MSs 300, 303, 459 (39th volume), 462, 644) or partially (279) were written in Persian. There are also complete (1902) or partial (2095) translations into Persian written between the lines. In some MSs there are Ottoman Turkish notes (MSs 990, 1798, Fr. 24).

About 15 out of 102 Qur'āns were compiled as complete texts of the Qur'ān divided into several parts (volumes), as for instance, the MS 459 (42 volumes) and MS 261 (16 volumes (many volumes missing)). There are also manuscripts (in one volume) where selected sūras of the Qur'ān were joined. In both cases the books were made either for educational purposes or were meant to be donated.

Nevertheless, the opposite examples can also be traced when in one binding two or more (up to 9) manuscripts are united. In the aforesaid samples both the paper and the copyist are obviously different (for example two (MSs 360, 406), three (MS 1022), five (MS 613), eight (MS 441), nine (MS 815) manuscripts in one binding).

A number of manuscripts from the Matenadaran collection are distinguished not only for fine calligraphy, but also for talented illuminations and skilful bindings. Particularly the following MSs 355, 647, 1004, 1537, 1621, 1766, 1798, 1884, 1926, 1928 have nice bindings, while another group of MSs has magnificent and subtle frontispieces and marginal ornaments (MSs 546, 647, 721, 787, 884, 963, 1004, 1537, 1623, 1798, 1926, 1928, Fr. 3, 48)

The transliteration of The German Oriental Society (Umschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft) was used when writing the Arab words in Latin letters. Meanwhile, the system used by Aram Ter-Ghevondian (from 1981) was followed throughout the transliteration in Armenian.

Both Matenadaran funds in general and the Qur'ān collection in particular were founded by joining two important collections of their time: the library of St. Etchmiadzin and the manuscripts of Moscow Lazarev Institute of Oriental languages (former Lazarian School) in the 1920s. However, throughout the past period, the number of gifts provided by various donators has exceeded the initial quantities of the collection.

Among the manuscripts, which initially came under the possession of the Matenadaran, ten (MSs 255, 256, 261, 267, 274, 275, 280, 294, 300, 322) are singled out for their interesting "biography". Due to the efforts of Archimandrite Hovhannes Hyusian and other devotees these manuscripts, together with approximately 1600 Armenian manuscripts (from Moush, Aghtamar,

Lim and other places), were rescued from destruction and transferred to St. Etchmiadzin, and afterwards to Yerevan.

It is with everlasting gratitude that the name of Mr. Harutyun Haoutune (New York, USA), one of the greatest donators of the Matenadaran, should be mentioned. Among his 400 donations there are 20 Qur'āns (MSs 969, 986, 990, 996, 1005, 1150, 719, 721, 787, 795, 800, 815, 856, 860, 884, 888, 942, 947, 963, 1004) which constituted a considerable part of the collection presented in this publication. The collection was completed with the contribution of numerous devotees from different corners of the world, among the latter Varoujan Salatian² (Damascus, Syria) – MSs 1621, 1622, 1623, Mihran Minasian (Aleppo, Syria) - 2288, 2363, 2574, Sarkis Mekertich Melkonian (Tehran, Iran) - 639, 647, Hakob Krikor Djerdjerian (Paris, France) - 1022, 1023, Hovik Edgarian (London, Great Britain) - 2095, Vahe Zarin (Copenhagen, Denmark) - 1098, Gherdian family (Boston, USA) - 2716 and others.

The description of the Qur'āns of the Matenadaran were done by Vahan Ter-Ghevondian (MSs 246, 248, 255, 256, 261, 267, 273, 274, 275, 276, 279, 280, 294, 300, 303, 322, 331, 340, 356, 2095 Fr. 1, 3, 15), Knarik Sahakyan (MSs 355, 359, 406, 616, 969, 986, 990, 996, 1005, 1022, 1098, 1150, 1622, 1902, 2000, 2005, 2140 Fr. 66, 70, 72, 73, 74), Venera Makaryan (MSs 360, 430, 439, 440, 441, 459, 479, 481, 531, 546, 560, 613, 617, 631, 1203, 2716, Fr. 16, 19, 24, 34), Movses Khecho (MSs 639, 642, 644, 647, 719, 721, 787, 795, 800, 815, 856, 860, 884, 888, 904, 942, 947, 963, 988, 1004, 1179, 1766, 1908, Fr. 39, 43, 48, 49) and Mihran Minasian (MSs 1023, 1114, 1537, 1552, 1621, 1623, 1798, 1842, 1884, 1912, 1915, 1926, 1928, 1945, 2021, 2025, 2039, 2044, 2144, 2164, 2198, 2199, 2201, 2288, 2363, 2574, Fr. 63, 64). The support of our colleagues in the Matenadaran has been drawn when deciphering and translating some scriptures in Persian and Ottoman Turkish.

The composers of the catalogue express their gratitude to the Council of the Islamic Manuscript Association (TIMA) and Thesaurus Islamicus Foundation for financing the work, as well as to the Matenadaran for publishing the book.

Throughout the work we permanently felt the support of the administration and collaborators of the Matenadaran, especially our colleagues from Depository, Reading Hall and Digitalization Department.

We do hope that the first attempt of description of the Arabic script collection of the Matenadaran will be welcomed in Armenia and abroad.

Vahan Ter-Ghevondian
Head of Academic Research
Head of Arabic Script Manuscript Department

² Varoujan Salatian lived in Damascus, however, the manuscripts have been donated to the Matenadaran from his collection of Beirut, and hence, they have been registered as such.

تأتي مجموعة المخطوطات المنسوخة بالحرف العربي (اللغات: العربية، الفارسية، العثمانية، إلخ) ضمن المجموعة الغنية لدار المخطوطات في يريفان والمعروفة باسم "ماتيناداران"، تأتي هذه المجموعة في المرتبة الثانية بعد المخطوطات الأرمنية من حيث العدد لتصل إلى 2723 مخطوطاً مضاف إليها 611 من القصائد المخطوطة بالحرف العربي وهي مقيدة ضمن فهرس واحد. لا يعتبر هذا العدد صغيراً ضمن مجموعة مخطوطات واحدة، بل أيضاً، بالنسبة لخزانة مكتبة مخطوطات كاملة. تشكل المخطوطات العربية بمواضيعها الدينية والتعليمية والعلمية القسم الأكبر من هذه المجموعة.

خلال الفترة الممتدة ما بين ستينيات وتسعينيات القرن المنصرم، عملت في الماتيناداران مجموعة من المستشرقين المختصين بقيادة الباحث الكبير هاكوب بابازيان على دراسة الوثائق الفارسية ونشرها بأسس علمية. وبالرغم من ذلك، فإن دراسة المخطوطات الشرقية وفهرستها العلمية ظلت مدة طويلة خارج اهتمامات الباحثين.

في السنوات الأخيرة، قامت إدارة الماتيناداران بإعطاء هذا العمل نفساً جديداً ليصبح أكثر تنظيماً وتنسيقاً وذلك بالتزامن مع إنشاء قسم جديد في الماتيناداران ألا وهو قسم فهرسة ودراسة المخطوطات المنسوخة بالأحرف العربية. إن أهم أهداف هذا القسم هو إعداد فهرس لتلك المخطوطات ودراساتها وإعداد طبعاات علمية للمخطوطات الأكثر أهمية.

في مطلع العام 2013 بدأ تعاون مثمر بين دار المخطوطات في يريفان وبين هيئة المخطوطات الإسلامية (كامبريدج - المملكة المتحدة)، ونتيجة لذلك التعاون بوشرت أعمال فهرسة نسخ القرآن الكريم المحفوظة في الماتيناداران وأقيمت في تلك الفترة دورة تدريبية في الماتيناداران لفهرسة مخطوطات الحرف العربي التي أدارها البروفيسور يان يوست فيتكام من جامعة ليدن والذي أزر بنصائحه مراحل إعداد هذا الفهرس: "فهرس نسخ القرآن الكريم في الماتيناداران".

يعتبر هذا المشروع أول تجربة لفهرسة جزء من المخطوطات العربية الموجودة في الماتيناداران على أسس علمية، إذ يحتوي على وصف 120 مخطوط وقصاصات للقرآن الكريم. قسم كبير من هذه المخطوطات سُخِط في إيران أو في الدولة العثمانية، بينما الغالبية الساحقة منها تعود إلى الفترة الممتدة ما بين القرنين السابع عشر والتاسع عشر.

انجزت هذه الفهرسة بجهود فريق عمل الماتيناداران الذي ضم خمسة متخصصين. ابتعد مفهرسو هذه المخطوطات عن الافتراضات واعتمدوا حواشي النسخ أو البراهين الثابتة عند تحديدهم زمان ومكان نسخ المخطوط. ورغم اتباعهم ذات الأسس والاعتبارات فقد يلاحظ بعض الاختلافات الطفيفة في الأسلوب دون أن يكون لها تأثير حقيقي على الفهرسة.

خمس من هذه المخطوطات (102 منها كاملة و18 قصاصات مخطوطة) لها حواشي زمنية دلت على قدمها، وهي: المخطوط رقم 1621، وهو عبارة عن الجزء الخامس من القرآن الكريم وفيه قيد وقف يعود تاريخه إلى القرن الثاني عشر الميلادي، ويُفهم من قيد الوقف أنه تم لصالح أحد جوامع دمشق عام 507 للهجرة (1114/1113 ميلادي، في الحقبة السلجوقية)، والواضح أنه نُسخ قبل ذلك التاريخ وعلى الأرجح في سورية. هذا المخطوط كان قد قُدم هدية إلى الماتيناداران من قبل فاروجان سلاطيان (دمشق، سورية).

المخطوط الثاني (رقم 1004)، يعود إلى الفترة الصفوية، نُسخ عام 1039 للهجرة (1630 ميلادي) في مدينة شيراز. أما باقي المخطوطات الثلاثة سُخِطت، على الأغلب، ما بين القرنين السابع عشر والتاسع عشر. كما وتحتل مخطوطات الفترة العجورية مكانة خاصة ضمن هذه المجموعة. وبناء على الحواشي فإن هذه المخطوطات سُخِطت في شيراز ومشهد وتبريز وطهران (سعد آباد) وحلب ووان، وهناك بعض المخطوطات التي لا تحتوي على حواش ويُعتقد أنها سُخِطت في إيران.

المخطوطات المفهرسة سُخِطت على أوراق شرقية وغربية، بينما المخطوطات المنسوخة على ورق حديث فعددها ليس بقليل، والحالة الخاصة الوحيدة هي القصاصة التي، ربما، تعود إلى القرنين الثامن أو التاسع الميلاديين وهي مكتوبة على الجلد بخط كوفي.

إن أغلب نسخ القرآن الكريم المحفوظة في الماتيناداران منسوخة بخط النسخ، مع بعض الاستثناءات: بالخط المغربي (مخطوط رقم: 631، 647، 1928، قصاصة رقم 49)؛ نستعليق (مخطوط رقم 1902)؛ ریحاني (مخطوط رقم 613 وقصاصة رقم 70)؛ رقعة (قصاصة رقم 63)؛ ثلث (مخطوط رقم: 531، 2044). في بعض الأحيان كتبت عناوين السور بخط يختلف عن خط المخطوط، فكتب، مثلاً، بالخط النسخي بينما عناوين السور بالخط الكوفي (مخطوط رقم 647) أو بخط الرقعة (مخطوط رقم 988) أو بخط الثلث (مخطوط رقم 1766).

تنوعت لغات الحواشي في هذه المخطوطات، فهناك حواش كتبت كلياً باللغة الفارسية (مخطوط رقم: 300، 303، (المجلد 39 من المخطوط رقم 459)، 462، 644) أو جزئياً (مخطوط رقم 279)، أو تراجم لمعاني القرآن الكريم باللغة الفارسية بين أسطر النص، وقد تكون هذه التراجم كاملة (مخطوط رقم 1902) أو جزئية (مخطوط رقم 2095). كما توجد كتابات باللغة العثمانية في بعض المخطوطات (مخطوط رقم: 990، 1798 وقصاصة رقم 24).

توجد 15 نسخة، تقريباً، من بين 102 نسخة من نسخ القرآن الكريم مجلدة مع بعضها كأقسام للقرآن الكريم لكنها عبارة عن نسخة كاملة منه (مخطوط رقم: 459 (مجلد 42)، 261 (مجلد 16)، وهو ناقص). هنالك مخطوطات سُخِطت فيها سور وآيات قرآنية محددة، وفي كلتا الحالتين فإن هذه النسخ قد انجزت لغايات تربوية أو إلهادها.

من ناحية أخرى، نجد مخطوطتين أو أكثر ضمن مجلد واحد (أحياناً 9 مخطوطات في مجلد واحد)، لكن يختلف فيها نوع الورق والناسخ (وأما مثال المخطوطان في مجلد واحد (مخطوط رقم: 360، 406) أو ثلاثة مخطوطات (مخطوط رقم 1022) أو خمسة مخطوطات (مخطوط رقم 613) أو ثمانية مخطوطات (مخطوط رقم 441) أو حتى تسعة مخطوطات (مخطوط رقم 815) في مجلد واحد).

تستوفنا بعض نسخ القرآن الكريم من مجموعة مخطوطات الماتيناداران ليس فقط لإتقان وجمال خطها، بل ولجمال زخرفاتها وتجليدها أيضاً. فالمخطوطات ذات الأرقام 355، 647، 1004، 1537، 1621، 1766، 1798، 1884، 1926 و1928 مجلدة تجليداً جميلاً، بينما المخطوطات ذات الأرقام 546، 647، 721، 787، 884، 963، 1004، 1537، 1623، 1798، 1926، 1928، 3 (قصاصة)، 48 (قصاصة) تستوفنا لجمال زخرفاتها في أولها أو على هوامش الصفحات.

اقتدينا عند تبديلنا الأحرف العربية بأحرف لاتينية بطريقة كارل بروكلمان وهانس فيري والمعروفة باسم (Deutschen Morgenländischen Gesellschaft - DMG - جمعية الاستشراق الألمانية)، أما عند تبديل تلك الكلمات بالأرمنية فاقتدينا بطريقة آرام دير غيفونديان التي يُعمل بها منذ العام 1981.

مثل جميع مجموعات المخطوطات في الماتيناداران، فإن مجموعة نسخ القرآن الكريم تشكلت بدمج مجموعتين رئيسيتين من مجموعة المخطوطات، ألا وهي مجموعة مخطوطات مكتبة دير إيجميانزين ومجموعة مخطوطات مكتبة جامعة لازاريان للغات الشرقية في موسكو (عشرينيات القرن العشرين)، لكن فاق عدد المخطوطات المهداة فيما بعد إلى الماتيناداران عدد المجموعتين الأولىيتين.

إن عشرة مخطوطات (255، 256، 261، 267، 275، 274، 280، 294، 300، 322) من القرآن الكريم "سيرة" شقيقة ومختلفة عن سيرة بقية المخطوطات، أحضرت هذه المخطوطات من أماكن مختلفة (موش، أعتامار، ليم، إلخ) خلال العامين 1915-1916 بهمة الأب هوفهانيس هيوسيان رئيس دير جزيرة ليم مع ما يُقارب من 1600 مخطوطاً أرمنياً تم إنقاذهم من الحرق والاندثار ونقلهم إلى دير إيجميانزين ومن ثم إلى يريفان.

لا بد لنا أن نذكر بإجلال أحد كبار أصدقاء الماتيناداران ألا وهو هاروتيون هازاريان (نيويورك، الولايات المتحدة الأمريكية) الذي أهدى الدار ما يقارب 400 مخطوط، منها 20 نسخة من القرآن الكريم (719، 721، 787، 795، 800، 815، 856، 860، 884، 888، 942، 947، 963، 969، 986، 990، 996، 1004، 1005، 1150) وهي تشكل قسماً كبيراً من مجموع المخطوطات المفهرسة. كما تم إغناء هذه المجموعة بإهداءات جماعة من المحسنين من مختلف دول العالم نخص بالذكر منهم فاروجان سلاطيان³ (دمشق، سورية) - 1621، 1622، 1623، مهراڤ ميناڤيان (حلب، سورية) - 2288، 2363، 2574، سرڪيس ملكونيان (طهران، إيران) - 639، 647، هاكوب كريكور جرجريان (باريس، فرنسا) - 1022، 1023، هوفيك إتكاريان (لندن، المملكة المتحدة) - 2095، فاهيه زارين (كوبنهاغن، الدنمارك) - 1098، عائلة غرتيان (بوسطن، الولايات المتحدة الأمريكية) - 2716 وآخرون.

أنجز فهرسة مخطوطات القرآن الكريم كل من: فاهان ديرغيونديان (246، 248، 255، 256، 261، 267، 273، 274، 275، 276، 279، 280، 294، 300، 303، 322، 331، 340، 356، 2095) والقصاصات ذات الأرقام 1، 3 و15؛ كناريك ساهاكيان (355، 359، 406، 406، 616، 969، 986، 990، 996، 1005، 1022، 1098، 1150، 1622، 1902، 2000، 2005، 2140) والقصاصات ذات الأرقام 66، 70، 72، 73، 74؛ فينييرا ملكاريان (360، 430، 439، 440، 441، 459، 479، 481، 531، 546، 560، 613، 617، 631، 1203، 2716) والقصاصات ذات الأرقام 16، 19، 24، 34؛ موسيس خيجو (639، 642، 644، 647، 719، 721، 787، 795، 800، 815، 856، 860، 884، 888، 904، 942، 947، 963، 988، 1004، 1179، 1766، 1908) والقصاصات ذات الأرقام 39، 43، 48، 49؛ مهراڤ ميناڤيان (1023، 1114، 1537، 1552، 1621، 1623، 1798، 1842، 1884، 1912، 1915، 1926، 1928، 1945، 2021، 2025، 2039، 2044، 2144، 2164، 2198، 2199، 2201، 2288، 2363، 2547) والقصاصات ذات الرقم 63، 64. وقام أصدقائنا الباحثون المختصون باللغات الفارسية والعثمانية في الماتيناداران بمساعدتنا على قراءة وترجمة الكتابات التي صادفتنا بتلك اللغتين.

كما يتوجه فريق العمل بشكره إلى لجنة مدراء هيئة المخطوطات الإسلامية لتغطيتها نفقات هذا المشروع، وللماتيناداران لمؤازرتها في طبع هذا الفهرس. الأصدقاء العاملين في الماتيناداران الذين ساعدونا وقدموا لنا الدعم طيلة مراحل هذا المشروع، ونخص بالذكر إدارة الدار والعاملين في قسم حفظ المخطوطات والمسؤولين عن قاعة المطالعة وقسم الرقمنة.

نأمل أن تلقى هذه التجربة الأولى لفهرسة مخطوطات الحرف العربي الموجودة في الماتيناداران استحساناً داخل أرمينيا وخارجها.

فاهان ديرغيونديان

رئيس البحوث العلمية

رئيس قسم فهرسة ودراسة مخطوطات الحرف العربي

³ ولد سلاطيان وعاش في دمشق، لكن المخطوطات التي وصلت إلى الماتيناداران جاءت من مجموعته المحفوظة في بيروت، لذا سُجّل على بطاقة تعريف المخطوط اسم المكان بيروت.

1 հատոր Ղուրան: ՏԵՂ՝ հավանաբար Իրան: ՆՅՈՒԹ՝ արևելյան թուղթ: ԹԵԴԹ՝ 457: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 16x10 սմ: ՏՈՂ՝ 11: ԳԻՐ՝ ձայնավորված *nash*, սև թանաք, հուշող նշանները՝ կարմիր: ԳՐԱԴԱՇՏ՝ 12x5,5/6սմ, առնված է բաղադրյալ շրջանակի մեջ (կապույտ, կարմիր, ոսկի): Էջ 1ա՝ ճակատագարդ (բուսանախշեր, բաց կանաչ, մանուշակագույն և սպիտակ):

Սուրաների անվանումները գրված են ոսկիով, այսները բաժանված են բոլորակներով (ոսկի): Էջակապ բառերը նշված են յուրաքանչյուր բ էջի ստորին մասում, սև թանաքով:

ԿԱԶՄԸ՝ սև մաշված կաշի, միջուկը՝ ստվարաթուղթ:

ԼՈՒՍԱՆՑԱԳՐԵՐ՝

– *թախմիս*, *թաաշիր*, *ջուզ* և *հիզր* (իրենց ստորաբաժանումներով), *սաջիա՛* ոսկի,

– աղոթքներ՝ սև թանաքով,

– հավելագրումներ՝ սև թանաքով:

ՄԿԻԶԲ՝ 2-րդ՝ «ալ-Բակարա» *սուրա*:

ԱՎԱՐՏ՝ 109-րդ սուրայի անվանումն ու առաջին տողը:

Թ. 108-109՝ սեփականատիրոջ նշումներ՝ Հիջրայի 1333 թվականին (1914/1915) դեպի Քերբելա կատարած ուխտագնացության մասին:

One-volume copy of the Qur'ān; possibly from Iran. MS on Oriental paper; 457 ff.; 16x10 cm; fully vocalized *nash* script; 11 lines to the page; black ink with rubrications in red; writing area 12x5,5cm/6cm; entire text set within a complex frame (blue, red, gold).

Illuminated frontispiece (1a) with vegetal decorations (light green, violet and white).

Sūra headings written with gold ink; *āya* dividers in a form of discs (gold); catchwords at the bottom of every verso page (black).

Worn-out binding of cardboard and leather (black).

Marginal arrangements:

– *ghuz*, *hizb* with subdivisions, *taḥmīs*, *ta'ašīr* and *sağda* in gold;

– some prayers (black ink);

– some missed out words and letters (black ink).

The manuscript was written without the 1st *sūra* (*al-Fātiḥa*), it starts from the 2nd *sūra* (*al-Baqara*), but the last 6 *sūras* are also missing. It stops on the heading of the 109th *sūra* and its first line.

There are some owner marks (108-109 ff.) referring to the pilgrimage to Kerbela dated 1333 (1914/1915).

Մեզ հասել է մեկ քաղցր զրուցանք՝ 457 թղթի, 16x10 սմ չափի, 11 ստորագրված թղթերով: Գրված է լիովին ձայնավորված *nash* սկզբով: Գրքի սկզբում կա մեկ լուսանկար: Այս լուսանկարը պատկերում է իսլամական շրջանակի մեջ գտնվող ճակատագարդը (կանաչ, կարմիր, ոսկի): 1 ա էջի վրա գրված է ճակատագարդի (բուսանախշեր, բաց կանաչ, մանուշակագույն և սպիտակ) նկարը: Սուրաների անվանումները գրված են ոսկիով: Էջակապ բառերը նշված են յուրաքանչյուր էջի ստորին մասում: Գրքի մեջ կան որոշակի շեղումներ (օրինակ՝ զրուցանքի 2-րդ հատվածում՝ «Ալ-Բակարա» սուրայի 109-րդ տողի և սուրայի անվանումների): 108-109 էջերում կան սեփականատիրոջ նշումներ: Նշումները վերաբերում են 1333 թվականին (1914/1915) Իրանից Իրաքի Կերբելա քաղաքից ուխտագնացության:



الهوامش:

التخميس، التعشير، الأحزاب، الأجزاء، السجديات بالذهب. صلوات على بعض الصفحات. الإضافات بالأسود.

النسخة ناقصة الأول والآخر، تبدأ عند السورة رقم 2 (البقرة) وتنتهي باسم السورة رقم 109 (الكافرون).

توجد حواشي لمالك المخطوط تتحدث عن رحلة الحج إلى كربلاء، عليها تاريخ 1333 هـ / (1914/1915 م)، على الورقتين 108-109.

معظم الأوراق في نهاية النسخة متلفة.

1 հատոր Ղուրան: ՆՅՈՒԹԸ՝ արևելյան թուղթ: ԹԵՐԹ՝ 258: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 24x16 սմ: ՏՈՂ՝ 15: ԳԻՐ՝ ձայնավորված նասխ, սև թանաք, հուշող նշանները՝ կարմիր: ԳՐԱԴԱՇՏ՝ 18x10,5 սմ, առկա պարզ շրջանակի մեջ (կարմիր):

Մուրաների անվանումները գրված են կարմիր թանաքով, այսները բաժանված են եռանկյունաձև դասավորված 3 փոքրիկ շրջանագծերով (կարմիր): Էջակապ բառերը նշված են յուրաքանչյուր ք էջի ստորին մասում՝ սև թանաքով:

ԿԱԶՄ՝ ժամանակակից (վարդագույն մոմլաթ), պահպանակ՝ Ա+Բ:

Լուսանցազրեր՝

- ջուզ, հիզբ (իրենց ստորաբաժանումներով), սաջդա՝ կարմիր,
- հավելագրումներ՝ սև թանաքով,
- արաբերեն և պարսկերեն նշումներ:

Ձեռագիրը պակասավոր է. սկիզբ՝ 2-րդ՝ «ալ-Բակարա» սուրայի 124-րդ այս, ավարտ՝ 113-րդ՝ «ալ-Ֆալակ» սուրայի առաջին տող:

Նախապես, հավանաբար, Մոսկվայի Լազարյան ճեմարանի հավաքածուի մաս է կազմել:

One-volume copy of the Qur'ān. MS on Oriental paper; 258 ff.; fly leaves [1+1]; 24x16 cm; fully vocalized *nash* script; 15 lines to the page; black ink with some rubrication (red); writing area 18x10,5 cm; entire text set within a simple frame (red).

Sūra headings written with red ink; āya dividers are in a form of 3 small circles (red) placed as a triangle; catchwords at the bottom of every verso page (black).

Modern binding of rose dermantin.

Marginal arrangements:

- *ğuz*՝ and *hizb* with subdivisions and *sağda* in red ink;
- some missed out words and expressions (black);
- some notes in Arabic and Persian.

MS is not complete. It starts with the 124th āya of the 2nd sūra (*al-Baqara*) and ends in the 113th sūra (*al-Falaq*).

Most probably the MS previously constituted part of the collection of Moscow Lazarev Institute of Oriental Languages.

مجلد واحد من القرآن الكريم. الورق شرقي، 258 ورقة، أوراق الحفظ (أ+ب)، القياس 16x24سم. الصفحة 15 سطرًا بالأسود بخط نسخ مشكول؛ الإشارات بالأحمر. قياس النص 10.5x18سم، ضمن إطار بسيط أحمر. أسماء السور بالأحمر، فواصل الآيات 3 دوائر حمراء على شكل مثلث. التعقيبات بالأسود أسفل الصفحة ب من كل ورقة. تم تجديد التجليد باللون الوردي.

الهوامش:

الأحزاب، الأجزاء، السجديات بالأحمر.

الإضافات بالأسود.

ملاحظات باللغتين العربية والفارسية.

النسخة ناقصة الأول والآخر، تبدأ عند نهاية الآية 124 من السورة رقم 2 (البقرة) وتنتهي بالسطر الأول من السورة رقم 113 (الفلق).

على الأرجح أن المخطوط من مجموعة كتب معهد لازاريان للغات الشرقية في موسكو.

1 հատոր Ղուրան: ՆՅՈՒԹ՝ արևելյան թուղթ: ԹԵՐԹ՝ 314: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 22,5x15 սմ: ՏՈՂ՝ 15: ԳԻՐ՝ ձայնավորված նասխ, սև թանաք: ԳՐԱԴԱՇՏ՝ 17x8,5 սմ, առկա բաղադրյալ շրջանակի մեջ (կարմիրի տարբեր երանգներ): Թ. 311բ՝ բուսասախս (կարմիր և կապույտ):

Մուրաների անվանումները գրված են ուղղանկյուն շրջանակի մեջ, կարմիր թանաքով, ձայնանիշերը՝ կապույտ (որոշ դեպքերում բացակայում են): Այսները բաժանված են բոլորակներով, երբեմն նաև ստորակետի կամ ծաղկի տեսքով (կարմիրի տարբեր երանգներով): Էջակապ բառերը նշված են յուրաքանչյուր ք էջի ստորին մասում՝ սև թանաքով:

ԿԱԶՄ՝ ժամանակակից (սրճագույն մոմլաթ), պահպանակ՝ Ա+Բ:

ԼՈՒՍԱՆՑԱԳՐԵՐ՝

- հիզբ, ջուզ (իրենց ստորաբաժանումներով) սաջդա՝ սև,
- հավելագրումներ,
- սեփականատիրոջ նշումներ (սև):

Ձեռագիրը պակասավոր է, սկիզբ՝ 2-րդ՝ «ալ-Բակարա» սուրայի 142-րդ այս:

Թ. 312, 313 և 314՝ աղոթքներ (Ղուրանի տեքստի ավարտից հետո):

Էջ 86բ՝ կլոր կնիք թվագրված Հիջրայի [1322թ. (1904/1905)]:

ԾՆԹ. Ձեռագիրը նախապես պահվել է ս. Էջմիածնի Մատենադարանում: Կազմաստանին Մատենադարանի աշխատակցի կողմից նշում՝ «Գազրիկյան ցուցակ N 947 էլիմ անապատի ձեռագրերից»: Ձեռագիրը մաս է կազմել 1915 թ. հուլիսին կորուստից փրկված և Վասպուրականից ս. Էջմիածին բերված այն հարյուրավոր ձեռագրերի, որոնց ցուցակագրումը կատարել է այդ ժամանակվա ս. Էջմիածնի Մատենադարանի գրասպահ Գազրիկ Ներսիսյանը:

Վնասված թերթերը՝ 112, 113, 161, 162, 241, 247 վերականգնված են:

One-volume copy of the Qur'ān. MS on Oriental paper; 314 ff.; fly leaves [1+1]; 22,5x15 cm; fully vocalized *nash* script; 15 lines to the page; black ink; writing area 17x8,5 cm; entire text set within a complex frame with two red lines of different shade.

Sūra headings in a rectangle frame, in red ink, with rubrications (blue), some are missing; *āya* dividers are in the form of a disc, sometimes as a comma or a flower (different shades of red); catchwords at the bottom of every verso page (black).

Modern binding of brown dermantin.

Marginal arrangements:

- *hizb* and *ḡuz* with subdivisions and *saḡda* (black ink);
- missed out words;
- owner's notes (black ink).

MS is not complete. It starts from the 142nd *āya* of the 2nd *sūra* (*al-Baqara*).

P. 311b, a vegetal decoration (red and blue) on the bottom of the page.

Ff. 312, 313, 314, prayers.

P.86b, a hardly visible round stamp. Dated [1322] of *Hijra* (1904/1905).

MS previously was in the collection of the library of the Holy Etchmiadzin. On the doublure A there is a note by a researcher of the Matenadaran "Gazrikian list N947, from the manuscripts of the Monastery of Lim". MS was among MSs rescued in July 1915 and taken from Vaspourakan to the St. Etchmiadzin. These MSs were included in the list of the library of St. Echmiatsin by librarian Mr. Gazrik Nersisian.

The partially damaged ff.112,113,161,162, 241, 247 were restored.

255

مجلد واحد من القرآن الكريم. الورق شرقي، 314 ورقة، أوراق الحفظ (أ+ب)، القياس 15x22.5 سم. الصفحة 15 سطرا بالأسود بخط نسخ مشكول. قياس النص 8.5x17 سم ضمن إطار مركب ثنائي أحمر. توجد زخرفة نباتية (أحمر، أزرق) في أسفل الصفحة 311 ب. بعض أسماء السور مكتوبة بالأحمر ضمن مستطيل، علامات التشكيل بالأزرق. بعض مستطيلات التوبيب لم تكتب فيها أسماء السور. فواصل الآيات بعضها أقراص، وأخرى فواصل أو زهور (أحمر). التعقيبة بالأسود أسفل الصفحة ب من كل ورقة. تم تجديد التجليد باللون البني.

الهوامش:

الأحزاب، الأجزاء، السجديات بالأسود.

إضافات لبعض الكلمات.

حواشي مالك المخطوط بالأسود.

النسخة ناقصة الأول، تبدأ عند منتصف الآية 142 من السورة رقم 2 (البقرة) حتى السورة الأخيرة، وتنتهي بصلوات (الصفحات 312، 313، 314).

يوجد ختم دائري غير واضح، الصفحة 86 ب على الأرجح هناك تاريخ في أسفل الختم: "1322" هـ / (1905/1904) م.

النسخة جزء من المخطوطات التي تم إنقاذها من الضياع عام 1915 وإحضارها من ولاية فاسبوراكان (وان) إلى إيجمياتزين وتم فهرستها من قبل كازريك نرسيسيان أمين خزانة الكتب في دار مخطوطات إيجمياتزين آنذاك. كتب على البطانة ما يلي: "فهرسة كازريكيان N 947 من مخطوطات دير "ليم". تم حفظ الكتيبات، في بادئ الأمر، في دار مخطوطات مدينة إيجمياتزين.

تم ترميم الأوراق التالية: 112، 113، 161، 162، 241، 247.

1 հատոր Ղուրան: ՏԵՂ՝ հավանաբար Օսմանյան կայսրություն: ՆՅՈԻԹ՝ արևելյան թուղթ: ԹԵԲԹ՝ 199: ՄԵՍՈՒԹՅՈՒՆ՝ 19,5x12,5 սմ: ՏՈՂ՝ 15: ԳԻՂ՝ ձայնավորված *nasih*, սև թանաք: ԳՐԱԴԱՇՏ՝ 15,5x8,8 սմ, առնված բաղադրյալ (եռագիծ) շրջանակի մեջ (սև և կարմիր):

Սուրաների անվանումները գրված են ուղղանկյուն շրջանակի մեջ (կարմիր, ձայնանիշերը՝ սև): Որոշ *սուրաների* անվանումները բացակայում են: *Այաները* բաժանված են բոլորակներով (կարմիր): Էջակապ բառերը նշված են յուրաքանչյուր բ էջի ստորին մասում՝ սև թանաքով:

ԿԱԶՄ՝ ժամանակակից (սրճագույն մովաթ), պահպանակ՝ Ա+Բ:

ԼՈՒՍԱՆՑԱԳՐԵՐ՝

– *հիզբ*, *ջուզ* (իրենց ստորաբաժանումներով), *սաջդա*՝ սև:

Ձեռագիրը պակասավոր է թե սկզբից և թե վերջից. սկիզբ՝ 2-րդ՝ «ալ-Բակարա» սուրայի 136-րդ այա, ավարտ՝ 33-րդ (ալ-Ահգար) սուրայի 21-րդ այայի կես:

ԾևԹ՝ Ձեռագիրը նախապես պահվել է ս. Էջմիածնի Մատենադարանում: Կազմաստառին Մատենադարանի աշխատակցի կողմից նշված է՝ «Գազրիկյան ցուցակ N 1282 Մուշի ս. Կարապետ»: Ձեռագիրը մաս է կազմել 1916 թ. կորուստից փրկված և Մուշից ս. Էջմիածին բերված այն ձեռագրերի, որոնց ցուցակագրումը կատարել է այդ ժամանակվա ս. Էջմիածնի Մատենադարանի գրապահ Գազրիկ Ներսիսյանը:

Ձեռագրի որոշ թերթեր (31-րդ՝ «Լուկման» սուրայի և 32-րդ՝ «ալ-Սաջդա» սուրայի թերթերի մի մասը) գլխիվայր են փակցված (հավանաբար վերականգնման ժամանակ): Որոշ վնասված թերթեր վերանորոգված են:

256

One-volume copy of the Qur'ān, possibly from the Ottoman Empire. MS on Oriental paper, 199 ff.; fly leaves [1+1]; 19,5x12,5 cm; fully vocalized *nasih* script; 15 lines to the page; black ink; writing area 15,5x8,8 cm; entire text set within a complex frame with 3 lines (black and red).

Instead of the majority of *sūra* headings there are rectangle frames which are left empty. The *sūra* headings which are available, are written with black ink (with red ink rubrications); *āya* dividers are in the form of a disc (red); catchwords at the bottom of every verso page (black). The MS is rebound (brown).

Marginal arrangements:

- *hizb* and *ḡuz* with subdivisions and *saḡda* in black.

The MS is not complete both in the beginning and at the end. It starts from the 136th *āya* of the 2nd *sūra* (*al-Baqara*) and stops in the middle of 21st *āya* of the 33rd *sūra* (*al-'Aḡzāb*). The 31st and 32nd *sūras* (*Luqmān* and *Saḡda*) are agglutinated from bottom to the top (probably while being restored).

MS previously was held in the library of St. Etchmiadzin. On the doublure A there is a note by a researcher of the Matenadaran "Gazrikian list N1282, from the manuscripts of the Monastery of St. Karapet in Moush", which means that the MS was among MSs rescued in 1916 and taken from Moush to St. Etchmiadzin. These MSs were included in the list of the library of St. Etchmiadzin by librarian Mr. Gazrik Nersisian.

Some damaged folios have been restored.

مجلد واحد من القرآن الكريم على الأرجح مخطوط عثمانى. الورق شرقي، 199 ورقة، أوراق الحفظ (أ+ب)، القياس 12.5x19.5 سم. الصفحة 15 سطرا بالأسود بخط نسخ مشكول. قياس النص 8.8x15.5 سم ضمن إطار مركب ثلاثي (أسود، أحمر).

توجد مستطيلات فارغة معدة لتبويب أسماء السور؛ بينما الأسماء الموجودة مكتوبة بالأحمر. فواصل الآيات أقراص حمراء. التعقيبة بالأسود أسفل الصفحة ب من كل ورقة. تم ترميم التجليد باللون البني. الهوامش:

الأحزاب، الأجزاء، السجديات بالأسود.

النسخة ناقصة الأول والآخر. تبدأ عند الآية 136 من السورة رقم 2 (البقرة) حتى منتصف الآية 21 من السورة رقم 33 (الأحزاب). أثناء عملية الترميم تم تركيب الأوراق من السورة رقم 31 (لقمان) حتى السورة رقم 32 (السجدة) بشكل مقلوب. تم حفظ المخطوط على الأرجح في دار مخطوطات إجمياترين (مدينة ذات أهمية روحية في جمهورية أرمينيا، فيها مقر كاثوليكوس عموم الأرمن الأرثوذكس). كتب على البطانة ما يلي: "فهرسة كازريكيان 1282 N، دير القديس قره بيت في مدينة موش".

النسخة جزء من المخطوطات التي تم إنقاذها من الضياع عام 1916 وإحضارها من مدينة موش إلى إجمياترين وتم فهرستها من قبل كازريك نرسيسيان أمين خزانة الكتب في دار مخطوطات إجمياترين آنذاك. النسخة مرممة.

16 հատոր (գրքույկ) Ղուրան: ՏԵՂ՝ Վան, Օսմանյան կայսրություն: ՃԱՄԱՆԱԿ՝ Հիջրայի 1283թ: (1866/1867): ԳՐԻՉ՝ Հաջի Բաբր (Բեքիր) աղա իբն Մուհամմադ Բուլանկ (Բուլանքը) գաղե: ՆՅՈՒԹ՝ թուղթ: ԹԵԲԹ՝ 295՝ (19+19+19+19+19+20+18+19+20+20+19+19+21+19+20+23): ՊԵՄՎ՝ 1-V(10), V-1(19), 3-V(10), V-1(19), 4-V(10), V-1(19), 6(5)-V(10), V-1(19), 7(6)-VI(12), IV-1(19), 9(8)-V(10), V(20), 11(10)-V(10), III(16), 1(17), 1(18), 12(11)-V(10), V-1(19), 14(13)-V-1(9), V(19), 1(20), 17(16)-V(10), V(20), 18(17)-V(10), V-1(19), 21(20)-V(10), V-1(19), 24(23)-VI-1(11), IV(19), 1(20), 1(21), 25-V(10), V-1(19), 28(29)-V(10), V(20), 29-V(10), VII-1(23): ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 23x17 սմ: Յուրաքանչյուր հատոր ունի իր հերթական համարը⁴:

ՏՈՂ՝ 9: ԳԻԲ՝ ձայնավորված նասխ, սև թանաք, հուշող նշանները՝ կարմիր: ԳԲԱ-ԴԱՇՏ՝ 15x10 սմ, առնված է բաղադրյալ շրջանակի մեջ (կարմիր):

Հատոր 1-ին, էջ 1բ և 2ա՝ նախազարդ շրջանակներ (կապույտ, դեղին) և բուսանախշեր (կապույտ, դեղին, կարմիր, սև): Մուրաների անվանումները գրված են բաց կարմիր թանաքով, այսները բաժանված են բոլորակներով (կարմիր): Էջակապ բառերը նշված են յուրաքանչյուր բ էջի ստորին մասում, սև թանաքով:

ԿԱԶՄ՝ մուգ կարմիր կաշի, կենտրոնում և չորս անկյուններում՝ դրոշմազարդեր (բոլոր 16 հատորներն (գրքույկները) ունեն միանման կազմ):

ԼՈՒՍԱՆՑԱԳՐԵՐ՝

– հիզբ, ջուզ (իրենց ստորաբաժանումներով) և սաջդա՝ կարմիր:

⁴ Գրիչը յուրաքանչյուր գրքույկ համարակալել է: Այդ համարը նշված է գրված վերջին էջի վրա: Բացի այդ, գրքույկի կազմին թուղթ է փակցվել, որի վրա գրված է նրա հերթական համարը և այն բառը, որով սկսվում է գրքույկը: Սակայն որոշ գրքույկների կազմի վրայի համարը սխալ է և չի համապատասխանում ներսի թվին: Ուստի մենք հիմք ենք ընդունել տեքստի մեջ նշված թիվը, իսկ փակագծում նշել ենք կազմի վրա նշվածը: Ըստ այդմ մեզ հասած գրքույկներն են. 1, 3, 4, 6(5), 7(6), 9(8), 11(10), 12(11), 14(13), 17(16), 18(17), 21(20), 24(23), 25, 28(29) և 29:

Հատոր 1-ին. սկիզբ՝ «ալ-Տաթիհա» սուրա, ավարտ՝ 2-րդ՝ «ալ-Բակարա» սուրայի 134-րդ այսան ներառյալ:

Հատոր 3-րդ. սկիզբ՝ 2-րդ՝ «ալ-Բակարա» սուրայի 142-րդ այսանի սկիզբ, ավարտ՝ նույն սուրայի 252-րդ այսան ներառյալ:

Հատոր 4-րդ. սկիզբ՝ 2-րդ՝ «ալ-Բակարա» սուրայի 253-րդ այսանի սկիզբ, ավարտ՝ 3-րդ՝ «ԱԼ Իմրան» սուրայի 91-րդ այսանի վերջ:

Հատոր 6(5)-րդ. սկիզբ՝ 4-րդ՝ «ալ-Նիսա» սուրայի 24-րդ այսան, ավարտ՝ 147-րդ այսան ներառյալ:

Հատոր 7(6)-րդ. սկիզբ՝ 4-րդ՝ «ալ-Նիսա» սուրայի 148-րդ այսանի սկիզբ, ավարտ՝ 5-րդ՝ «ալ-Մաիդա» սուրայի 82-րդ այսանի վերջ:

Հատոր 9(8)-րդ. սկիզբ՝ 6-րդ՝ «ալ-Անամ» սուրայի 111-րդ այսան, ավարտ՝ 7-րդ՝ «ալ-Արաֆ» սուրայի 87-րդ այսանի վերջ:

Հատոր 11(10)-րդ. սկիզբ՝ 8-րդ՝ «ալ-Անֆալ» սուրայի 41-րդ այսան, ավարտ՝ 9-րդ՝ «ալ- Թաուբա» սուրայի 93-րդ այսանի վերջ:

Հատոր 12(11)-րդ. սկիզբ՝ 9-րդ՝ «ալ-Թաուբա» սուրայի 94-րդ այսանի սկիզբ, ավարտ՝ 11-րդ՝ «Հուդ» սուրայի 5-րդ այսանի վերջ:

Հատոր 14(13)-րդ. սկիզբ՝ 12-րդ՝ «Յուսուֆ» սուրայի 53-րդ այսանի սկիզբ, ավարտ՝ 14-րդ՝ «Իբրահիմ» սուրայի վերջ:

Հատոր 17(16)-րդ. սկիզբ՝ 18-րդ՝ «ալ-Քահֆ» սուրայի 72-րդ այսան, ավարտ՝ 20-րդ՝ «Տահա» սուրայի վերջ:

Հատոր 18(17)-րդ. սկիզբ՝ 21-րդ՝ «ալ-Անբիյա» սուրայի սկիզբ, ավարտ՝ 22-րդ՝ «ալ-Հաջ» սուրայի վերջ:

Հատոր 21(20)-րդ. սկիզբ՝ 27-րդ՝ «ալ-Նամլ» սուրայի 56-րդ այսան, ավարտ՝ 29-րդ՝ «ալ-Անբաբուր» սուրայի 45-րդ այսանի վերջ:

Հատոր 24(23)-րդ. սկիզբ՝ 36-րդ՝ «Յա –Մին» սուրայի 28-րդ այսան, ավարտ՝ 39-րդ՝ «ալ-Ջումար» սուրայի 32-րդ այսանի սկիզբ:

Հատոր 25-րդ. սկիզբ՝ 39-րդ՝ «ալ-Ջումար» սուրայի 32-րդ այսանի սկիզբ, ավարտ՝ 41-րդ՝ «Յուսսիլաթ» սուրայի 46-րդ այսանի վերջ:

Հատոր 28(29)-րդ. սկիզբ՝ 58-րդ՝ «ալ-Մուջադալա» սուրայի սկիզբ («ալ-Մուջադալա» անվանման փոխարեն գրված է 67-րդ՝ «ալ-Մուլք» սուրայի անվանումը), ավարտ՝ 66-րդ՝ «ալ-Թահիմ» սուրայի վերջ:

Հատոր 29-րդ. սկիզբ՝ 67-րդ՝ «ալ-Մուլք» սուրայի սկիզբ, ավարտ՝ 77-րդ՝ «ալ-Մուրսալաթ» սուրայի վերջ:

Հատոր 11(10)-րդ, էջ 18բ՝ 2 կլոր կնիքներ՝ «Սելիմ Սաբրի» գրություն, և հատոր 14(13)-րդ, էջ 20բ՝ 3 կլոր կնիքներ, որոնցից մեկը՝ «Մուստաֆա Սաբրի» գրությամբ, իսկ մյուսը թվագրված Հիջրայի 1296թ. (1878/1879):

ԳՐԻՉԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

էջ 1ա (Ստորև մեջբերվող արաբերեն հիշատակարանը գրված է բոլոր գրքույկների 1ա էջին, սև թանաքով)

- قد وقف وحبس وسبل هذا المصحف الشريف الحاجي بكر اغا بن محمد بلنك زاده وقفا صحيحا شرعيا على الجامع الشريف المسمى بجامع الشريف خسرو باشا ورحمة الله عليه الكائن في بلدة وأن لاجله خالصا لوجه الله تعالى وطلبا لمرضاته بشرط ان لا يخرج ولا يباع ولا يوهب ولا يرهن ولا يبدل فمن بدله بعد ما سمعه فانما اثمه على الذين يبدونه ان الله سميع عليم اللهم اغفر لواقفه وكتابه ولقارنه ولمن سعى فيه برحمتك يا ارحم الراحمين في سنة ثلث وثمانين ومائتين والف

ՄՆԹ.՝ Ղուրանի տեքստը պակասավոր է: Այն հավանաբար ուսումնական նպատակով բաժանվել է 30-ից ավելի փոքրիկ գրքույկների, որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է 2, 3 կամ 4 *suras*: Այդ գրքույկներից մեզ է հասել 16-ը, որոնք միավորված են 261 գույքահամարի տակ: Նախապես պահվել է ս. Էջմիածնի Մատենադարանում: Ձեռագիրը մաս է կազմել 1916 թ. կորուստից փրկված և Մուշից ս. Էջմիածին բերված ձեռագրերի:

261

16 volumes (part) of a multivolume Qur'an, copied in Van, the Ottoman Empire; MS on paper; 295 (19+19+19+19+19+20+18+19+20+20+19+19+21+19+20+23) ff.; every volume has its number⁵. The numbers and quires of each volume are: 1-V(10), V-1(19), 3-V(10), V-1(19), 4-V(10), V-1(19), 6(5)-V(10), V-1(19), 7(6)-VI(12), IV-1(19), 8-V(10), V(20), 11(10)-V(10), III(16), 1(17), 1(18), 12-V(10), V-1(19), 14-V-1(9), V(19), 1(20), 17(16)-V(10), V(20), 18(17)-V(10), V-1(19), 21-V(10), V-1(19), 24(23)-VI-1(11), IV(19), 1(20), 1(21), 25(24)-V(10), V-1(19), 29(28)-V(10), VII-1(23): All of them have the same size: 23x17 cm.

Fully vocalized *nash* script; 9 lines to the page; black ink, with rubrication (reading signs) in red; writing area 15x10 cm; entire text set within a complex frame with 2 lines (light red).

Pp.1b and 2a of the first book are illuminated with frames (blue and yellow) and with vegetal decorations (blue, yellow, black and red); *sūra* headings in light red; *āya* dividers in the form of a red disc; catchwords at the bottom of every verso page (black).

The date of copying is 1283 of *Hijra* (1866/1867); the scribe is *Hağī Bakr (Bekir) ağa ibn Muḥammad Bulank (Bulanik) zadeh*; the following colophon in Arabic is written on p.1a in each volume (black ink).

